

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/4**

**17 հոկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Վարդան Թովմասյանի 24.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 189 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Վարդան Թովմասյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Վարդան Թովմասյանը հայտնում է, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 189 որոշումն անօրինական է, քանի որ իր նկատմամբ պետք է կիրառվեին «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, ինչը, սակայն, չի կիրառվել: Բացի այդ, մինչ օրս հարկային տեսչության կողմից պարտավորությունների առկայության մասին երբևէ չի տեղեկացվել:

Ա/Ձ Վարդան Թովմասյանը համաձայն չէ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 189 որոշմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրված պարտավորության հետ: Ինչ վերաբերվում է հաստատագրված վճարի գծով առաջադրված պարտավորությանը՝ գումարով 23.612 դրամ, ապա դրա հետ գանգատաբերը համաձայն է:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վարդան Թովմասյանը խնդրում է Աշտարակի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 189 որոշումը պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրված պարտավորության մասով ճանաչել անվավեր:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Վարդան Թովմասյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 23.07.2014 թ-ին ընդունել է թիվ 189 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 23.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Վարդան Թովմասյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 395.034 դրամ, որից 23.612 դրամն առաջացել է հաստատագրված վճարի 1999 թ-ի 1-ին կիսամյակի համար ներկայացված հաշվարկով, իսկ 371.422 դրամը 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարներն են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 23.07.2014 թ-ին ընդունել է թիվ 189 որոշումը՝ Ա/Ձ Վարդան Թովմասյանից 395.034 դրամ գանձելու վերաբերյալ:

ինչ վերաբերվում է գանգատում նշված այն պնդմանը, որ Ա/Ձ Վարդան Թովմասյան նկատմամբ պետք է կիրառվեն «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները և 2006 թ-ի հունվարից նվազագույն սոցիալական վճարների գումարներ չհաշվարկվեն, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա»:

Քննարկվող դեպքում 11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները Ա/Ձ Վարդան Թովմասյանի նկատմամբ չէին կարող կիրառվել, քանի որ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներից բացի Ա/Ձ Վարդան Թովմասյանը պարտավորություններ է ունեցել նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ եկամուտների գծով, մասնավորապես՝ հաստատագրված վճարի գծով, որն առաջացել է Ա/Ձ Վարդան Թովմասյանի կողմից 1999 թ-ի 1-ին կիսամյակի համար ներկայացված հաշվարկով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՏՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 189 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուղարկվելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկել ՀՀ վարչապետի որոշումը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

